ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/3

ք.Մեղրի «24» սեպտեմբեր 2021թ.

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքը», ի դեմս Արարատ Թումանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ազատ Գասպարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Խաղահրապարակի հիմնում Մեղրի քաղաքում** շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն օրացույցային գրաֆիկի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

Сканировано с CamScanner

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում

Сканировано с CamScanner

Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում **է 20 430 000 (Քսան միլիոն չորս հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, որից 3 405 000 (երեք միլիոն չորս հարյուր հինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Сканировано с CamScanner

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի

[31] Եթե պայմանագիրը կնքվել է ,Գնումների մասինե ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Сканировано с CamScanner

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[33]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[34]

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

---

[33] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:

[34] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

Сканировано с CamScanner

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Մեղրիի համայնքապետարան	«Մեղրու ՃՇՇՁ»ՍՊԸ
ՀՀ,Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2	ՀՀ Սյունիքի մարզ Ք.Մեղրի,Գործարանային 89
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Բանկ Ինեկոբանկ ՓԲԸ Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 900302199014	Հ/Հ 2052122159381001
Հ/Հ 900302000238	ՀՎՀՀ 09700228
ՀՎՀՀ 09425378	Տնօրեն՝ Ա. Գասպարյան
Համայնքի ղեկավար Է.Թումանյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Сканировано с CamScanner

Հավելված թիվ 1
« » սեպտեմբերի 2021 թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/3 *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
«ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ՀԻՄՆՈՒՄ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հազ.դրամ

N	Հիմնավորում	Աշխատանքիանվանումը	Չափման միավոր	Քանակը	Աշխատանքի միավորի արժեքը	Աշխատանքի ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6	7
		Դաշտիցանկապատհողիվրա L=24,0 մ h=3,45մ				
1	1–1560	Հիմքերի փորում էքսկավատորով 3-րդ կարգի գրունտներում կողալիցքում	խմ	2,90	0.900	2.610
2	1-961 Գ=1,2	Խրամուղու լրամշակում ձեռքով 3-րդ կարգի գրունտներում	խմ	0,2	3.300	0.660
3	8–10	Ավազի նախաշերտի կառուցում հիմքերի տակ	խմ	0,80	5.200	4.160
4	6-13	Կետային հիմքերի կառուցում Բ15 դասի բետոնով	խմ	2,15	69.800	150.070
5	ինֆ	Ամրան Փ16 AIII	կգ	5,2	0.650	3.380
6	6-127	Գոտու կառուցում Բ15 դասի բետոնով 200մմ հաստությամբ	խմ	0,96	89.400	85.824
7	ՄԱՓ 1-240 Գ=2	Մետաղական ցանկապատի մոնտաժում 3,0մ բարձրությամբ	մ	24,0	6.100	146.400
8	ինֆ	Կանգնակ խողովակ 60x60x2մմ	մ	40,7	2.420	98.494
9	ինֆ	Միացման դետալ խողովակ 30x30x1,5մմ	մ	11,4	1.000	11.400
10	ինֆ	Անկյունակ 35x35x3մմ	մ	281,2	1.250	351.500
11	ինֆ	Մետաղական ցանցամրան Փ8AI	տ	0,530	676.600	358.598
12	15-614	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	79,20	1.450	114.840
					Ընդամենը	1327,936
					Ընդամենը %	11,47
		Դաշտի ցանկապատ գոյություն ունեցող հենապատի վրա L=45,4 մ h=3,45մ				
1	6-127	Գոտու կառուցում Բ15 դասիբետոնով 200մմ հաստությամբ	խմ	1,82	89.400	162.708
2	46-156	Անցքերի շաղափում 20,0սմ խորությամբ 20,0մմ տրամագծով 57 հատ	գծմ	11,4	1.100	12.540
3	6-82	Ամրանների տեղադրում բացված անցքերում Փ16AIII	կգ	27,0	0.750	20.250

Сканировано с CamScanner

4	ՄԱՓ 1-240 Գ=2	Մետաղական ցանկապատի մոնտաժում 3,0մ բարձրությամբ	մ	45,4	6.100	276.940
5	ինֆ	Կանգնակ խողովակ 60x60x2մմ	մ	66,5	2.420	160.930
6	ինֆ	Միացման դետալ խողովակ 30x30x1,5մմ	մ	21,5	1.00	21.500
7	ինֆ	Անկյունակ 35x35x3մմ	մ	266,4	1.250	333.000
8	ինֆ	Մետաղականցանցամրան Փ8AI	տ	1,004	0.650	0.653
9	15-614	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	156,60	1.450	227.070
					Ընդամենը	**1215.591**
					Ընդամենը %	10,5
		Մետաղական դարպաս 1 հատ				
1	ՄԱՓ 1-345	Մետաղական դարպասի մոնտաժում	հատ	1,0	4.700	4.700
2	ինֆ	Անկյունակ 35x35x3մմ	մ	11,0	1.250	13.750
3	ինֆ	Մետաղական ցանց ամրան Փ8AI	տ	0,0513	0.620	0.032
4	ինֆ	Ծխնի (ամրան 18 AIII)	կգ	1,6	0.650	1.040
					Ընդամենը	**19.522**
					Ընդամենը %	**0,17**
		Մետաղական մեկմետր բարձրությամբ ուղիղ ճաղաշարով ցանկապատ L=33,9մ				
1	46-156	Անցքերի շաղափում 20,0սմ խորությամբ 20,0մմ տրամադծով 56 հատ	գծմ	11,2	1.100	12.320
2	6-82	Ամրանների տեղադրում բացվածանցքերում Փ16AIII	կգ	26,7	0.750	20.025
3	6-127	Գոտու կառուցում Բ15 դասիբետոնով 200մմ հաստությամբ	խմ	1,36	89.400	121.226
4	9–40 վեր	Մետաղական ճաղաշարի մոնտաժում	մ	34,0	3.100	105.400
5	ինֆ.	խողովակ N 50 x 30 x2,0 պրոֆիլի	մ	34,0	1.700	57.800
6	ինֆ.	խողովակ N 30 x 30 x1,5 պրոֆիլի	մ	34,0	1.000	34.000
7	ինֆ.	խողովակ N 20 x 20 x1,5 պրոֆիլի	մ	2,8	0.700	1.960
8	ինֆ.	խողովակ N 15 x15 x1,5 պրոֆիլի	մ	158,2	0.630	99.666
9	15-614	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու անգամ	քմ	34,0	1.450	49.300
					Ընդամենը	**501.697**
					Ընդամենը %	**4.33**

Сканировано с CamScanner

		Աղբամաններ 4 հատ				
1	1-966	Փոսերիփորում 4-րդ կարգիգրունտներում	խմ	0,08	8.900	0.712
2	6--1	Փոսերի բետոնացում Բ 15 դասիբետոնով	խմ	0,08	49.000	3.920
3	ինֆ	ամրան 10 AI	կգ	2,4	0.620	1.488
4	ՄԱՓ 2-622	Մետաղական աղբամանների մոնտաժում	հատ	4,0	8.000	32.000
5	ինֆ	ամրան 10 AI	կգ	1,20	0.600	0.720
6	ինֆ	թիթեղ 3մմ	քմ	2,04	21.100	43.044
7	ինֆ	խողովակ 40x20x1,5մմ	մ	6,0	1.200	7.200
8	ինֆ	խողովակ 20x20x2մմ	մ	1,4	0.801	1.121
9	ինֆ	անկյունակ 30x30x3մմ	մ	0,4	1.100	0.440
10	15-614	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	9,16	1.450	13.282
					Ընդամենը	**103.927**
					Ընդամենը %	**0.90**
		Մետաղական նստարան 13 հատ				
1	1-965	Փոսերի փորում 3-րդ կարգի գրունտներում	խմ	1,30	4.900	6.370
2	6--1	Փոսերի բետոնացում Բ 15 դասի բետոնով	խմ	1,30	49.000	63.700
3	ՄԱՓ 2-499	Մետաղական նստարանների մոնտաժում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից	հատ	13,0	5.600	72.800
4	ինֆ	Ամրան 12 AIII	կգ	18,47	0.620	11.452
5	ինֆ	խողովակ 40x40x2մմ	մ	57,2	1.590	90.948
6	ինֆ	խողովակ 40x30x1,5մմ	մ	140,4	1.700	238.680
7	15-614	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	24,70	1.450	35.815
					Ընդամենը	**519.765**
					Ընդամենը %	**4.49**
		Ծառերիտնկում 25հատ				
1	1-965	Փոսերի փորում 3-րդ կարգիգրունտներում	խմ	7,50	4.900	36.750
2	1-1592	Բուսական բնահողի մշակում էքսկավատորով 0,5խ.մ տարողությամբ բարձելով ինքնաթափ ավտոմեքենաներին ծառերի փոսերի համար	1000 խմ	0,0062	599.000	3.714
3	C310-10	Բուսահողի տեղափոխում 3 կմ հեռ վրա	տ	8,06	1.600	12.896
4	1-968	Բուսահողի փռում ծառերի տակ	խմ	6,20	1.100	6.820

Сканировано с CamScanner

5	48-196	Դեկորատիվ ծառերի տնկում	ծառ	25,0	13.430	335.750
6	27-87	Բազալտե եզրաքարերի տեղադրում ծառերի շուրջը 100x200 մմ	մ	90,0	8.200	738.000
					Ընդամենը	**1133.930**
					Ընդամենը %	**9.79**
		Խաղահրապարակի ստեղծում				
1	27-35	Ասֆալտբետոնե ծածկի քանդում h=3,0սմ 620,3քմ	խմ	18,61	4.800	89.323
2	27-31	Խճի նախապատրաստական շերտի քանդում h=6,0սմ 620,3քմ	խմ	37,218	0.600	22.331
3	11-49 վեր	Պատերի մաքրում ավազաշիթային սարքով	քմ	95,7	0.300	28.710
4	15-201	Հենապատերի սվաղում g/ավազեշաղախով	քմ	95,7	1.800	172.260
5	15–535	Պատերիներկումջրադիմացկունճակատայիններկով	քմ	95,7	1.300	124.410
6	27-86-1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150մմ	մ	7,3	13.600	99.280
7	27-43 27-43-1	Խճային հիմքի իրականացում ճանապարհի վնասված հատվածների վերականգնման համար h=6սմ	100 քմ	1,989	106.700	212.226
8	27-164 27-166	Ասֆալտբետոնե ծածկի կառուցում մանրահատիկ ա/բ h=4 սմ«Բ»տիպի	100 քմ	1,989	398.900	793.412
9	27-22-1	Խաղահրապարակի իխճինախապատրաստական շերտի կառուցում 6,0սմ հաստությամբ 175,2քմ	խմ	10,512	11.720	13.201
10	11–11	Բետոնե նախապատրաստական շերտի կառուցում B 15 դասիբետոնով 6,0 հաստությամբ ռետինե ծածկույթիտակ 175,2քմ	խմ	10,512	50.200	527.702
11	11-55 11-56	Հարթեցնող շերտիկառուցում 30մմ հաստությամբ ռետինե ծածկույթի տակ	քմ	175,20	1.560	273.312
12	11-210	Ռետինե սալիկներով ծածկույթի կառուցում 40մմ հաստությամբ (600x600x40մմ)	քմ	175,2	17.900	3136.080
13	1-1594	Շինարարական աղբի բարձում ավտոմեքենաներին 0,5խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով	1000 խմ	0,0125	1037.800	12.973
14	C310-12	Շին աղբի տեղափոխում 3,0կմ հեռավորության վրա	տն	22,0	1.700	37.400
					Ընդամենը	**5652,62**
					Ընդամենը %	48,82

Сканировано с CamScanner

		Բասկետբոլի վահանակ				
1	1-965	Փոսերի փորում 4-րդ կարգի գրունտներում	խմ	1,45	8.900	12.905
2	6-13	Կետային հիմքերի կառուցում Բ15 դասի բետոնով	խմ	1,45	69.900	101.355
3	ինֆ	Ամրան 16 AIII	կգ	4,8	0.600	2.880
4	9–51	Մետաղական սյուների մոնտաժում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից	տ	0,21	50.700	10.728
5	ինֆ	խողովակ 60x60x2մմ	մ	39,2	1,580	61.936
6	ինֆ.	խողովակ N 30 x 30 x1,5 պրոֆիլի	մ	33,6	0.900	30.240
7	ինֆ	անկյունակ 30x30x3մմ	մ	12,2	1.100	13.420
8	15-614	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	14,90	1.450	21.611
9	ինֆ	Ապակե թելային վահանակ	զույգ	1,0	322.400	322.400
					Ընդամենը	**577.475**
					Ընդամենը %	4,99
		Արտաքին լուսավորություն				
		Մալուխի անցկացում				
1	1-961	Խրամուղու փորում ձեռքով մալուխի տեղադրման համար 500x250մմ հատույթով L=56մ	խմ	7,9	4.700	37.130
2	22-117	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում խրամուղում Φ=25x2,3մմ	մ	56,0	1.050	58.800
3	8–10	Ավազե նախաշերտի փռում 10,0 սմհաստությամբ	խմ	1,30	5.100	6.630
4	8-149-1	Այլումինե մալուխի անցկացում խրամուղում պոլիէթիլենային խողովակի միջով ԱՎՎԳ 4 x10 մմ²	100 մ	0,75	61.700	46.275
5	8-409-2	Այլումինեմալուխիանցկացումմետաղականսյուներիմիջով ԱՎՎԳ 2x4 մմ²	100 մ	0,175	40.500	7.088
6	1-968	Հետադարձլիցքիհիրականացումփափուկգրունտից	խմ	6,6	1.100	7.260
					Ընդամենը	**163,183**
					Ընդամենը %	**1.41**
		Մետաղականսյուներիմոնտաժում 7 հատ				
1	1-965	Փոսերի փորում 3-րդ կարգի գրունտներում	խմ	0,7	4.900	3.430
2	6–1	Փոսերի բետոնացում Բ 15 դասի բետոնով	խմ	0,7	49.000	34.300
3	33-53	Մետաղական սյուների մոնտաժում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից	տ	0,196	114.500	22.442

Сканировано с CamScanner

4	ինֆ	Ամրան 16 AIII	կգ	3,5	0.650	2.275
5	ինֆ	խողովակ 80x40x2մմ	մ	50,4	2.410	121.464
6	ինֆ	խողովակ 15x15x1մմ	մ	6,3	0.400	2.520
7	ինֆ	թիթեղ 1,5մմ	քմ	2,94	12.600	37.044
8	8--609-1	Լուսարձակների մոնտաժում «լեդ»մակնիշի 50W- TP 65	հատ	7,0	15.550	108.850
9	15-614	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	5,6	1.450	8.120
					Ընդամենը	**340.445**
					Ընդամենը %	**2,94**
		Տաղավարի ներքին էլեկտրական լուսավորություն				
1	21-133	Լուսատուկախովիառաստաղի 100 W	հատ	3,0	3.400	10.200
2	8-591-1	Միաբևեռ անջատիչների տեղադրում բաց տեղադրման	հատ	1,0	1.700	1.700
3	8-591-6	Միաբևեռ խրոցակային վարդակների տեղադրում բաց տեղադրման հողանցման կոնտակտով	հատ	1,0	2.300	2.300
4	8-402-2	Հաղորդալար պղնձե ջիղով հատվածքը 2x4 մմ² ՊՊՎՐ մակնիշի բազմաջիղ	100մ	0,1	82.100	8.210
					Ընդամենը	**22.410**
					Ընդամենը %	**0,19**
					Ամբողջը	**11578.500**
					Ընդամենը %	**100**
		ԱԱՀ 20%				2315.700
		Ընդամենը				**13894.200**
		Սարքավորումներ				
		1,Մարզասարքեր				
1	տեղ	Իրանը և ուսերը զարգացնող մարզասարք	հատ	1	166.500	166.500
2	տեղ	Կոնքերի և որովայնի մկանների համար նախատեսված մարզասարք	հատ	1	166.500	166.500
3	տեղ	Ձեռքերի զարգացման համար նախատեսված մարզասարք	հատ	1	143.000	143.000
4	տեղ	Ձեռքերի ամրապնդման համար նախատեսված մարզասարք	հատ	1	143.000	143.000
5	տեղ	Հեծանիվ մարզասարք	հատ	1	143.000	143.000
6	տեղ	Ոտքերում արգելում արզասարք	հատ	1	143.000	143.000
7	տեղ	Մեջքի մկանների համար նախատեսված մարզասարք	հատ	1	143.000	143.000
8	տեղ	Քայլելու համար նախատեսված մարզասարք	հատ	1	143.000	143.000
9	տեղ	Ոտքերի և ձեռքերի համար նախատեսված մարզասարք	հատ	1	143.000	143.000
10	տեղ	Ոտքերի համար նախատեսված մարզասարք	հատ	1	143.000	143.000
11	տեղ	Զուգափայտ	հատ	1	143.000	143.000

Сканировано с CamScanner

12	տեղ	Կոնքի և ոտքերի համար նախատեսված մարզասարք	հատ	1	166.500	166.500
					Ընդամենը	**1786.500**
					Ընդամենը %	**32.80**
		2 Մանկական խաղահրապարակներ				
1	տեղ	Մանկական խաղահրապարակի սարք N 1 մարկայի	հատ	1	1830.00	1830.000
2	տեղ	Մանկական խաղահրապարակի սարք N 2 մարկայի	հատ	1	1830.00	1830.000
					Ընդամենը	**3660.000**
					Ընդամենը %	**67.20**
		Ամբողջը				5446.500
		Ընդամենը սարքավորումներ				**5446.500**
		ԱԱՀ 20%				1089.300
		Ընդամենը				**6535.800**
		Ամբողջը ծավալաթերթով				**20430.000**

* Կապալառուն աշխատանքները կատարվում է **ք. Մեղրի Փարամազի փ. 32** հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեղրիի համայնքապետարան

ՀՀ,Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900302199014
Հ/Հ 900302000238
ՀՎՀՀ 09425378
Համայնքի ղեկավար՝ Ա.Թումանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեղրու ՃՇՇՁ»ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ Ք.Մեղրի,Գործարանային 89

Բանկ Ինեկոբանկ ՓԲԸ Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2052122159381001
ՀՎՀՀ 09700228
Տնօրեն՝ Ա. Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Сканировано с CamScanner

Հավելված թիվ 2
« » սեպտեմբերի 2021 թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/3 *ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆԳՐԱՖԻԿ
«ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ՀԻՄՆՈՒՄ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Քայքայված Ա/Բ ծածկույթի քանդում	Պայմանագիր կնքելու օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 18 օր հետո
2	Նոր Ա/Բ ծածկույթի կառուցում	Պայմանագիր կնքելու օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 45 օր հետո
3	Հենապատերի Ց/Ա սվաղում և ջրադիմացկուն ներկում	Պայմանագիր կնքելու օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 90 օր հետո
4	Ռետինե ծածկի կառուցում	Պայմանագիր կնքելու օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 120 օր հետո
5	Մետաղական ցանկապատերի կառուցում	Պայմանագիր կնքելու օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 150 օր հետո
6	Արտաքին լուսավորման ցանցի կառուցում	Պայմանագիր կնքելու օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 165 օր հետո
7	Ավելորդ գրունտի և շին.աղբի բարձում-տեղափոխում աղբավայր – 3կմ	Պայմանագիր կնքելու օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 180 օր հետո
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիր կնքելու օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 180 օր հետո

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեղրիի համայնքապետարան

ՀՀ,Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900302199014
Հ/Հ 900302000238
ՀՎՀՀ 09425378
Համայնքի ղեկավար՝ Ա.Թումանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեղրու ՃՇՇՁ»ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ Ք.Մեղրի,Գործարանային 89

Բանկ Ինեկոբանկ ՓԲԸ Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2052122159381001
ՀՎՀՀ 09700228
Տնօրեն՝ Ա. Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Сканировано с CamScanner

« » սեպտեմբերի 2021 թ.
ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021-2022 թթ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**															
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	Ընդամ
1	45231270	**ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ Ի ՀԻՄՆՈՒՄ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ**	. . . %	. . . %	. . . %	. . . %	. . . %	. . . %	. . . %	. . . %	. . . %	20430000	20430000	20430000	20430000	20430000	20430000	204300

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեղրիի համայնքապետարան

ՀՀ,Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900302199014
Հ/Հ 900302000238
ՀՎՀՀ 09425378
Համայնքի ղեկավար՝ Ա.Թումանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեղրու ՃՇՇՁ»ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ
Ք.Մեղրի,Գործարանային 89

Բանկ Ինեկոբանկ ՓԲԸ Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2052122159381001
ՀՎՀՀ 09700228
Տնօրեն՝ Ա. Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Сканировано с CamScanner